Հանրապետական
Մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «ՀՀ Տավուշի մարզի Բաղանիսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Գնահատում, գնահատման տեսակներ, գնահատման գործիքները դասավանդման շրջանակներում

Վերապատրաստող, մենթոր՝ **Աննա Անտոնյան**

Ուսուցիչ՝ **Նոնա Հարությունյան**

2023

Բովանդակություն

Ներածություն_____ էջ 3 -5

Գլուխ1 Գնահատումը որպես ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց_____ էջ 6- 7

Գլուխ2 Գնահատման հիմնական սկզբունքները_____ էջ 8-10

Գլուխ 3 Գնահատման ձևերն ու տեսակները_____ էջ 11-22

Գլուխ 4 Գնահատման գործիքների կիրառությունը հայոց լեզվի և գրականության դասերին_____ էջ 23-34

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ_____էջ 35

Օգտագործվածգրականությունների ցանկ_____ էջ 36

Ներածություն

Դասարանում յուրաքանչյուրը հանճարեղ է, բայց եթե դուք ձկանը պետք է գնահատեք ծառի վրայով սողալու կարողության համար, ապա նա ամբողջ կյանքում կտառապի այն մտքից, որ ինքն անկարող է:

Ալբերտ Էյնշտեյն

Կրթական գնահատումը գիտելիքների վերաբերյալ էմպիրիկ տվյալների փաստաթղթավորման և օգտագործման համակարգված գործընթացն է:Գնահատման տվյալները կարող են ստացվել սովորողների աշխատանքի ուղղակի ուսումնասիրությունից՝ ուսումնառության արդյունքների ձեռքբերումը գնահատելու համար կարող են հիմնվել այն տվյալների վրա,որոնցից կարելի է եզրակացություններ անել ուսման վերաբերյալ: Գնահատումը հաճախ օգտագործվում է թեստի փոխարեն, բայց չի սահմանափակվում թեստերով:Գնահատումը կարող է կենտրոնանալ անհատական սովորողի, սովորող համայնքի/ դասարան,սեմինար կամ սովորողների այլ կազմակերպված խումբ/, դասընթացի, ակադեմիական ծրագրի, հաստատության կամ որպես ամբողջություն կրթական համակարգի վերաբերյալ:Գնահատումը հզոր կրթական գործիք է,որն ազդում է ոչ միայն ինքնագնահատականի, այլ նաև անհատի զարգացման վրա որպես ամբողջություն:Այն կարևոր է ուսումնական գործունեության հաջող իրականացման համար:

Կրթական գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է,որն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողունակությունների ու հմտությունների մակարդակը,ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը:**<<Գնահատում>>** բառը կրթական համատեքստում կիրառության մեջ է մտել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Կրթական գնահատումը լայն հասկացություն է,որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների

վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով: Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմ: Հետազոտական աշխատանքի մեջ անդրադարձ է կատարվելու գնահատման հիմնական սկզբունքներին ու գործառույթներին, գնահատման գործիքների տեսակներին,ձևավորող գնահատման բաղադրիչներին, չափորոշչի ներդրմամբ պայմանավորված՝ գնահատման նոր ձևերին:

Հետազոտության նպատակն է՝

Ուսումնասիրել և ցույց տալ,որ գնահատումը հայոց լեզու և գրականության դասավանդման գործընթացում նպաստում է սովորողների առաջադիմությանը:

Հետազոտության հարցն է՝

Ինչպե՞ս է գնահատումը նպաստում ուսումնական գործընթացի կատարելագործման, ուսման որակի բարձրացման վրա:

Հետազոտության խնդիրներն են՝

.Ուսումնասիրել գնահատման գործառույթները, հիմնական սկզբունքները, տեսակները:

.Ներկայացնել ձևավորող և միավորային գնահատման առանձնահատկությունները:

Ընտրել,մշակել գնահատման արդյունավետ գործիքներ և փորձառությամբ հիմնավորել դրանց արդյունավետությունը:

Արդիականությունը

Կյանքի արագընթաց փոփոխությունների, տեղեկատվության ծավալի բազմապատկման, կրթության նկատմամբ հասարակության պահանջկոտության մեծացման պայմաններում, մարդկությանը միշտ էլ հուզել են կրթության ու դաստիարակության խնդիրները:Ժամանակի հետ փոխվում են նաև այդ բնագավառի պահանջները, աշխատանքային մեթոդները և անխուսափելի են դառնում բարեփոխումները: Հանրակրթությունում ընթացող բարեփոխումների նպատակն է որակի բարելավումն ու ժամանակակից պահանջներին համապատասխանող գործունեության ապահովումը: Կրթության որակի բարելավման խնդիրը միշտ

արդիական է:Կրթության որակ ասելով հասկանում ենք կրթակարգով, պետական չափորոշիչով և ծրագրերով ներկայացվող պահանջներին սովորողի համապատասխանության աստիճանը:

Նշենք, որ հիմնականում կրթության որակով է պայմանավորված պետության, անհատի, հետևաբար և հասարակության վիճակն ու բարեկեցությունը:Կրթության նկատմամբ ձևական և մակերեսային վերաբերմունքը վնասում է թե՛ հասարակությանը, և թե պետությանը:Այդ խնդիրների լուծման ժամանակակից մոտեցումներում առանցքային դեր է վերագրվում հանրակրթությունում աշակերտի գիտելիքի, կարողությունների ու հմտությունների գնահատման և արժևորման համակարգերին:

Առավել արդիական է դառնում գնահատումն օգտագործել ոչ միայն որպես ուսուցման արդյունքների ստուգման, այլ նաև որպես ուսուցումը բարելավելու միջոց:Գնահատումը բազմաբնույթ եզրույթ է,որը սահմանվում է որպես տեղեկատվության ձեռքբերման գործընթաց, որն օգտագործվում է սովորողների ուսումնառության, առարկայական ծրագրերի և պլանների մասին որոշումներ կայացնելու համար:Գնահատումը տեղեկատվության ժողովումն է այն բանի մասին,թե ուսումնառության նպատակի որ աստիճանի է հասել սովորողը: Գնահատման արդյունքների վավերականությունը մեծանում է,եթե գնահատումը ճշտորեն համապատասխանում է ուսումնական նպատակակետերի մտադրությանը:Գնահատումը պետք է ծառայի հիմնական նպատակին՝ խթանել և ուղղորդել սովորողի կրթական և ճանաչողական գործունեությունը և դրանով իսկ նպաստել նրա զարգացմանը:

Գլուխ 1

Գնահատումը որպես ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց

Մենք գնահատում ենք ոչ թե մարդուն,
այլ նրա մտքերն ու ձեռքբերումները:

Արսեն Վենգեր

Ժամանակակից առանձին հոգեբաններ և մանկավարժ-գիտնականներ առաջարկում են սովորողների ուսման առաջադիմության գնահատման համար բալային համակարգեր ստեղծել ըստ ուսումնական առարկաների և հրաժարվել գործող միասնական համակարգից : Նրանք այսպես են պատճառաբանում՝ քանի որ յուրաքանչյուր ուսումնական առարկա ունի իր առանձնահատկությունները, հենց դա էլ հուշում է յուրաքանչյուր ուսումնական առարկայի համար գնահատման հատուկ համակարգ մշակել: Այսպիսի միտումը սխալ է: Անհերևակայելի է, թե ինչ դժվարություններ կսեղծվեն ուսուցիչների և աշակերտների համար: Առանձին մանկավարժ-գիտնականներ գտնում են, որ աշակերտների մտավոր մակարդակները, նրանց յուրացրած գիտելիքների, կարողությունների ու հմտությունների չափը, ծավալը, դրանց կիրառումը կյանքում, պրակտիկայում և այլն, կարելի է որոշել ոչ թե բալերով այլ՝ գիտական հասկացություններին, փաստերին, տեսություններին, օրինաչափություններին, օրենքներին, մեթոդներին տիրապետելու չափանիշնեչով: Այսինքն ՝ թե սովորողները որքանով են դրանք ըմբռնել, հասկացել: Գիտնականների մի այլ խումբ այն կարծիքին է, որ նշված նորմատիվները չեն կարող արտահայտել սովորողների ձեռք բերած գիտելիքների չափը, ծավալը, խորությունը, մակարդակները: Ասենք, թե այդ պարամետներով առաջնորդվելիս սովորողներից մեկը ցուցաբերում է գերազանցին կամ լավ-ին համարժեք գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, սակայն մեզ անհայտ կմնան շատ փաստեր, օրինակ, ինչպես Պ՝ Պիդկասիստին է նշում՝ հնարավոր չէ թափանցել աշակերտի խելքի տիրույթ և ստույգ իմանալ, թե որքան գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ունի նա: Առանձին գիտնականներ էլ

առաջարկում են գործող բալային համակարգի փոխարեն կիրառել գիտելիքների գնահատման խոսքային ձևը: Այսինքն՝ գնահատական չնշանակել: Այդ կարծիքին է Շ Ամոնաշվիլին: Արտասահմանյան մի շարք երկրներում (ԱՄՆ, Գերմանիա, Անգլիա և այլն) մանկավարժ գիտնականները և հոգեբանները կատարում են որոնումներ՝ թվանշանային գնահատականից հրաժարվելու համար, սակայն առայժմ հաջողության չեն հասել:Մեր հանրակրթության մեջ գնահատման նոր համակարգի ներդրումը ենթադրում է «գնահատում» հասկացության իմաստի ընդլայնում: Գնահատումն այսօր արդեն չի կարելի դիտել որպես ուսուցման պրոցեսի մի հավելված, այն համալիր կրթական գործընթաց է, որ կոչված է տեղեկություններ տալու ուսուցման որակի և նրա զարգացման դինամիկայի մասին: Կրթական հանրության մեջ աստիճանաբար ձևավորվում է այն համոզմունքը, որ ուսումնական գործունեության և արդյունքների գնահատումը սոսկ առկա գիտելիքների ստուգման ու վավերացման գործառույթ չունի: Իր այս գործառույթից զատ այն հնարավորություն ունի սովորողների մեջ ձևավորելու ուսումնական կայուն մոտիվացիա, կարող է ուսուցման գործընթացը դարձնել վերահսկելի, սատարել ճիշտ մասնագիտական կողմնորոշմանը, ձևավորել ժամանակակից մարդուն անհրաժեշտ մի շարք որակներ: Գնահատման նոր համակարգը պիտի օգնի սովորողին բացահայտելու իր ուսումնական ներունակ հնարավորությունները, սատարի նրա ինքնուրույնության կայացմանը, զարգացմանն ու ինքնահիրացմանը: Դպրոցում աշակերտակենտրոն կրթություն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ սովորողը դիտվի և իրականում լինի ուսուցման լիարժեք սուբյեկտ, մասնավորապես նաև՝ գնահատման գործընթացի սուբյեկտ: Աշակերտն իր ուսումնառության պրոցեսը կկարողանա լավագույնս կազմակերպել, եթե հստակ պատկերացում ունենա թե իրենից ինչ են պահանջում և ինչպես են գնահատում իր ձեռքբերումները: Եթե դպրոցը սովորողին ներքաշում է գնահատման գործընթաց, դարձնում է նրան այդ գործընթացի ակտիվ մասնակից, ապա վերջինս կկարողանա իսկապես օգտվել գնահատման արդյունքներից և գնահատումը ծառայեցնել իր ուսումնական նպատակների

Գլուխ 2

Գնահատման հիմնական սկզբունքները

Գնահատումը սովորողի մասին տեղեկություն ստանալու, հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքներն ի մի բերելու և վերահսկելու գործընթաց է:

Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման ու տիրապետման աստիճանի, նրանց անձնային որակների ստուգումն է,ինչպես նաև ուսման որակի բարելավումն ու վերահսկումը:

Հիմք ընդունելով հանրակրթության բովանդակությանը ներկայացվող պահանջները, ուսումնական գործընթացի կազմակերպման ու վերահսկման բարեփոխված մոտեցումները և մեթոդները՝ սովորողների ընթացիկ գնահատման համար սահմանվում են հետևյալ առաջնային նպատակները.

1.սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության ընթացքի արձանագրումը, թերությունների բացահայտումն ու շտկումը,

2.հանրակրթության պետական կրթակարգով և միջնակարգ կրթության պետական կրթական չափորոշիչներով ամրագրված հանրակրթության բովանդակային բաղադրիչների յուրացման ընթացքի բացահայտումը, ինչպես նաև դրանց փուլային ստուգումն ու գնահատումը:

Գնահատումը կարող է լինել *օբյեկտիվ* կամ *սուբյեկտիվ*: Օբյեկտիվ գնահատումը կախված չէ գնահատողի անձնական մտածողությունից կամ վերաբերմունքից, օրինակ՝ պատասխանի ընտրությամբ առաջադրանքը: Գնահատումը սուբյեկտիվ է, երբ այն կախված է գնահատողի անձնական դատողություններից, սկզբունքներից ու վերաբերմունքից: Սուբյեկտիվ են համարվում բանավոր հարցումները, պատասխանի շարադրանքով առաջադրանքները,կամ որոշ գործնական աշխատանքներ:

Սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման սկզբունքներն են՝

Վավերություն . Վավերություն նշանակում է, որ գնահատումը պետք է ճշգրտությամբ

նկարագրի և/կամ չափի սովորողների կողմից նախատեսվող կրթական վերջնարդյունքների տիրապետման կամ ձեռքբերման աստիճանը, այլ ոչ՝ որևէ այլ չնախատեսված վերջնարդյունքներինը կամ կողմնակի գործոններինը:Վավեր է այն գնահատումը, որը գնահատում է այն, ինչի համար նախատեսված է վերջինս:

Հուսալիություն

Հուսալիությունը նշանակում է, որ գնահատումը պետք է տա արդյունքներ, որոնք միասնական/հաջորդական և կայուն են: Հուսալի գնահատումն այն է, որը կախված է իր վերջնարդյունքներից, իսկ այդ վերջնարդյունքները պետք է կրկնօրինակելի լինեն, եթե գնահատման նույն ընթացակարգը կրկին կիրառվի նույն սովորողի նկատմամբ և ուրիշ գնահատողի կողմից: Ինչպես և վավերության պարագայում է, հաճախ կարծիք է հնչում, թե հուսալիությունը վերաբերում է միայն քանակական գնահատումներին:Դա ճիշտ չէ: Որակական գնահատումների արդյունքները ևս կարող են լինել հուսալի կամ անհուսալի: Օրինակ՝ դրանք անհուսալի կարող են լինել այն դեպքում, երբ գնահատողի դատողությունները/տված գնահատականները ժամանակի ընթացքում փոփոխվեն և հետևողական չլինեն:

Հավասարություն

Հավասարություն նշանակում է, որ գնահատականը պետք է լինի արդար և չպետք է առավելություն տա կամ անբարենպաստ վիճակ ստեղծի որևէ խմբի կամ անհատի համար: Գնահատման անաչառ մեթոդը երաշխավորում է,որ բոլոր սովորողներն՝ անկախ իրենց ժողովրդագրական կամ այլ առանձնահատկություններից,կարողունակության իրենց մակարդակը դրսևորելու հավասար հնարավորություն ունենան:Գնահատման ժամանակ անհավասարություն կարող է առաջանալ տարբեր պատճառներով:Օրինակ, եթե գնահատումը պահանջում է սովորողներից տանն ունենալ տեղեկատվության մեծածավալ աղբյուրների հասանելիություն, ապա դա կարող է խտրական լինել նրանց հանդեպ, ովքեր նման հնարավորություններ չունեն:

Թափանցիկություն կամ անկողմնալակություն

Թափանցիկություն նշանակում է, որ սովորողները պետք է գնահատման վերաբերյալ նախապես ստանան անթաքույց, լիարժեք և հստակ տեղեկատվություն: Գնահատման թափանցիկ գործընթացն այն գործընթացն է, երբ սովորողները նախապես տեղեկացվում են գնահատման նպատակի, գնահատվող կրթական վերջնարդյունքների

մասին, ինչպես նաև կիրառվելիք գնահատման ընթացակարգի և գնահատման չափանիշների մասին: Այն մեթոդները, որոնք սովորողից պահանջում են գուշակել, թե ինչ է իրենցից պահանջվում գնահատման լավ արդյունք ունենալու համար, թափանցիկ չեն:

Օբյեկտիվություն

Օբյեկտիվ գնահատումը հաճախ ասոցացվում է քանակական տվյալների հետ, որոնք ապահովում է սովորողը՝ պատասխանելով հարցերի և համանման վարժություններ կատարելով, երբ միայն մեկ պատասխանն է ճիշտ և կարող է հեշտությամբ որակվել որպես ճիշտ. շատ դեպքերում դա կատարվում է որևէ անձի կողմից (ուսուցիչ, սովորող, հավասարակից/համադասարանցի կամ արտաքին գնահատող), թեև որոշ դեպքերում դա կարող է արվել մեխանիկորեն (օրինակ՝ համակարգչային ծրագրով):Այդուհանդերձ, օբյեկտիվ գնահատումներ կարելի է կատարել ոչ միայն քանակական տվյալների, այլ նաև որակական տվյալների հիման վրա:Սա վերաբերում է այն դեպքերին,երբ որակական նյութերի մեկնաբանման կամ կոդավորման համար կիրառվող դասակարգումները հստակ ու աներկբա սահմանված են և շատ քիչ տեղ է թողնված անորոշության կամ անձնական մեկնաբանության համար (օրինակ՝ եթե հստակ և թափանցիկ չափանիշներ են կիրառվում թղթապանակը գնահատելիս, ապա գնահատումն օբյեկտիվ է):

Իրագործելիություն

Իրագործելիության սկզբունքը նշանակում է, որ կիրառվող գնահատման մեթոդը պետք է լինի իրատեսական՝ հաշվի առնելով համապատասխան ռեսուրսները, ժամանակն ու գործնական սահմանափակումները: Գնահատման իրագործելի ընթացակարգը չի կարող ոչ ողջամիտ պահանջներ առաջադրել՝ սովորողին կամ գնահատողին հասանելի ռեսուրսների կամ ժամանակի առումով:Այն սահմանափակումները, որոնք մեթոդն անիրագործելի են դարձնում, ամենայն հավանականությամբ, այդ մեթոդը կդարձնեն նաև անհուսալի և անվավեր:

Պարզություն և մատչելիություն

Գնահատումը տալիս է հստակ և թափանցիկ տեղեկատվություն, մեծացնում է կրթական գործընթացում բոլոր մասնակիցների ներգրավվածությունն ու պատասխանատվությունը: Այս սկզբունքը ենթադրում է, որ գնահատման նպատակներն ու ընթացակարգերը պետք է լինեն հստակ, հրահանգները՝ հստակ և ճշգրիտ,

արդյունքները՝ օգտակար և մատչելի: Գնահատման գործընթացում կասկած չպետք է լինի դրա նպատակահարմարության և կոռեկտության վերաբերյալ:

Գլուխ 3

Գնահատման ձևերն ու տեսակները

Հանրակրթական ուսումնական հաստատությունում ընթացիկ գնահատումն իրականացվում է քանակական (միավորային) և ձևավորող (ուսուցանող) ձևերով՝ դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից հաստատված կարգով:

Ամփոփիչ/միավորային գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն առարկայական չափորոշչի:Միավորային գնահատումը պետք է լինի հնարավորինս օբյեկտիվ և հնարավորություն տա ստուգելու ցանկացած սովորողի իրական կարողությունները:

- Միավորային գնահատման կիրառման դեպքում սովորողի ուսումնառության արդյունքների քանակական ցուցիչը գնահատականն է:
- Գնահատականը գնահատման գործընթացի նիշային արտահայտությունն է՝ միավորներով:
- Միավորային գնահատումը կիրառվում է 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից սկսած:
- Միավորային գնահատման դեպքում կիրառվում է սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման 10-միավորային սանդղակ՝ որտեղ որևէ նիշ անբավարար գնահատական չէ:
- Միավորային գնահատման արդյունքները գրանցվում են էլեկտրոնային դասամատյանում:
- Միավորային գնահատման անհնարինության դեպքում դասամատյանում դրվում են հետևյալ նշանակումները՝ սովորողի բացակայության դեպքում՝ «բ».
- պատասխանելուց հրաժարվելու, գրավոր աշխատանքը չկատարելու դեպքում՝ «-»:

- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի միավորային գնահատումն իրականացվում է գնահատման ընդհանուր սկզբունքով՝ 10 միավորային սանդղակով:

Միավորային գնահատման հիմնական գործառույթները՝ վերահսկող, ուսուցանող, կարգավորող, դաստիարակող, զարգացնող:

Միավորային գնահատումը ունի վերահսկող դեր:Դրա նպատակն է թվանշանների միջոցով գնահատել ուսումնական գործընթացում աշակերտի ձեռքբերումները, որոնք սահմանված են չափորոշիչներով և ծրագրերով:

Այն նախատեսվում է կիրառել ուսումնական որևէ թեմա կամ ենթաթեմա անցնելուց և ուսումնացիրելուց հետո: Միավորային գնահատումը ունի «մրցակցային» բնույթ: Ուսուցչի նշանակած գնահատականն օբյեկտիվորեն հարաբերական է: Աշակերտի պատասխանին միավոր վերագրելիս՝ ուսուցիչն առաջնորդվում է մյուս աշակերտների պատասխանների հետ համեմատության սկզբունքով, հետևաբար, այս դեպքում առավել կարևոր է դառնում արդարության սկզբունքը: Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝

1) թեստ.

2) բանավոր հարցում.

3) գրավոր աշխատանք.

4) գործնական (լաբորատոր) աշխատանք.

5) նախագծային աշխատանք:/կարգի 38 կետ/՝ Նախագծային աշխատանքը պետք է գնահատել նախապես սովորողին տրամադրվող հիմնական չափանիշներով: Նախագծին չմասնակցող սովորողը չի գնահատվում:

Միավորային գնահատման ցանկացած ձևի կիրառմանը պետք է նախորդեն հայտորոշիչ և ձևավորող գնահատումներ:

Բանավոր հարցումը որպես ամփոփիչ / միավորային գնահատման տեսակ

Բանավոր հարցումը գնահատման մի տեսակ է, որի ժամանակ սովորողը բանավոր խոսքով ներկայացնում է յուրացրած ուսումնական նյութը՝ դրսևորելով ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: Բանավոր հարցման հիմնական առավելությունն այն է, որ դրանով ստուգվում են սովորողի ոչ միայն մտապահման ու

վերարտադրման ընդունակությունները, այլ նաև նյութի գիտակցված ընկալման մակարդակը: Բանավոր հարցման միջոցով պարզվում են սովորողի ձեռքբերումները հետևյալ ուղղություններով.

- բանավոր խոսք,
- վերարտադրություն,
- հաղորդակցություն,
- համագործակցություն,
- լեզվամտածողություն,
- գիտելիքի յուրացում,
- տրամաբանություն,
- ստեղծագործական մտածողություն,
- ուսումնական գործունեություն ցուցաբերելու (մոդելավորելու) կարողություններ:

Գործնական աշխատանքը որպես ամփոփիչ/միավորային գնահատման տեսակ: Հանրակրթության դերը պայմանավորված է նաև նրա գործնական–կիրառական նշանակությամբ: Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից մեկն է՝ աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս: Գործնական անվանենք սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների,կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին (ենթադրվում է նաև չափիչ սարքերի կամ համակարգչի կիրառություն): Գործնական կարող ենք համարել այն աշխատանքները, որոնց կատարման համար թուղթ ու գրիչից բացի օգտագործվում են նաև այլ միջոցներ:Գործնական աշխատանքներ են ուսումնական փորձերն ու լաբորատոր աշխատանքները, ինչպես նաև ուսումնական գործընթացում նախատեսվող ֆիզիկական պատրաստվածությունն ու այլ ֆիզիկական աշխատանքներ:

Սովորողներին ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջների համաձայն, նախատեսվում են տարբեր բնույթի ու տիպի գործնական աշխատանքներ.

1. հարցումների, դիտարկումների միջոցով տվյալների հավաքում և օգտագործում աղյուսակների և գծապատկերների տեսքով,
2. մոդելների, ձևանմուշների և մանրակերտերի (մակետների) պատրաստում,

3. դասավանդման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի ստեղծում (պաստառներ, ցուցափեղկեր (ստենդներ), տեսաֆիլմեր, էլեկտրոնային ներկայացումներ և այլն),

4. լաբորատոր աշխատանքների կատարում:

Գործնական աշխատանքներ կարող են հանձնարարվել ինչպես տանը, այնպես էլ դպրոցում կատարելու համար:

Թեմատիկ աշխատանքը որպես ամփոփիչ/միավորային գնահատման տեսակ՝ Թեմատիկ գրավոր աշխատանքը միավորային գնահատման մի տեսակ է, որի իրականացման ընթացքում սովորողն իր ուսանած ուսումնական նյութը ներկայացնում է գրավոր:Այդ աշխատանքները տրվում են ծրագրային որոշակի թեմա ուսուցանելուց հետո: Թեմատիկ գրավոր աշխատանքում պետք է ընդգրկվեն սովորողներին ներկայացվող չափորոշչային պահանջներին համապատասխան առաջադրանքներ՝ դրանց յուրացման մակարդակը բացահայտելու նպատակով:Կախված ուսումնական առարկայից և թեմայից՝ թեմատիկ աշխատանքը կարող է նաև լինել բանավոր կամ գործնական:Կարելի է կիրառել նաև կարճաժամկետ գրավոր աշխատանքներ:

Թեմատիկ գրավոր աշխատանքներում պետք է ներառվեն 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ, ինչպես նաև համեմատաբար դժվար առաջադրանքներ, որոնք պահանջում են նյութի խորքային յուրացում, բարդ և անծանոթ իրադրություններում կողմնորոշվելու կարողություն, գիտելիքներն ստեղծագործաբար կիրառելու հմտություն: Այդ գրավոր աշխատանքները գնահատվում են 10 միավորային սանդղակով:Եթե գնահատման համար ընտրվում է այլ սանդղակ, ապա պաշտոնական գրանցման համար այդ սանդղակով ստացված միավորները պետք է բերել 10 միավորային սանդղակի՝ օգտվելով համապատասխան բանաձևից:

Թեստը որպես ուսումնառության արդյունքների չափման գործիք Թեստը (հարցարան) որոշակի նպատակով բարեխղճորեն ընտրված առաջադրանքն է կամ առաջադրանքների խումբ, որի նպատակն է հնարավորինս ճիշտ գնահատել սովորողների ձեռքբերումները և արժևորել նրանց ուսումնական գործունեությունը: Թեստ կազմելիս շատ կարևոր է պարզ պատկերացնել այն ուսումնական նպատակը, որի համար այն նախատեսված է:Առանց նպատակի հստակեցման՝ թեստը հիմնականում վերածվում է առաջադրանքների անհասկանալի մի համախմբի: Նպատակի մասին խոսելիս՝ տեղին է հիշել Սենեկայի **«Եթե մարդը չգիտի, թե դեպի որ**

նավահանգիստն է նավարկում, ապա նրա համար ոչ մի քամի էլ նպաստավոր չէ՞ ասացվածքը:Թեստի միջոցով ստուգվում են սովորողի գիտելիքը, կարողությունները, հմտություններն ու արժեքային համակարգը:Սովորողի ուսումնառության արդյունքների միավորային գնահատման ենթակա բանավոր, գրավոր և գործնական աշխատանքների ստուգումից ստացված արդյունքների միավորների բնութագրիչները սահմանված են Հանրակրթության պետական չափորոշիչի պահանջներին համապատասխան:

ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1-4 րդ դասարաններում գնահատման ժամանակ թվային նիշը փոխարինող որևէ նշան չի կիրառվում, կիրառվում է միայն բնութագրող բացատրական գնահատում:

1. Գնահատման ենթակա չեն սովորողի անհատական հատկությունները, մտավոր գործընթացների ինքնատիպությունը/ հիշողություն, տեմպ, ընկալում, ուշադրություն և այլն/
2. Գնահատման ենթակա են սովորողի անհատական նվաճումները/ ներկայիս նվաճումները ՝նախորդի համեմատ/:
3. Առաջընթացը նկարագրող թերթիկը լրացվում է էլեկտրոնային եղանակով:

ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. Հայտորոշիչ գնահատման նպատակն է՝ բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքները ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ:
2. Հայտորոշիչ գնահատումը հնարավորություն է տալիս պլանավորելու ուսուցման և ուսումնառության գործընթացը, ինչպես նաև ընտրելու ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևեր, միջոցներ և մեթոդներ:
3. Հայտորոշիչ գնահատումն իրականացվում է տարբեր ձևերով՝ կախված ուսումնասիրվող առարկայի, թեմայի և սովորողի կամ ուսումնական խմբի տարիքային առանձնահատկություններից:
4. Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը:

ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ձևավորող գնահատումն ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է՝ բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները, ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար: Ձևավորող գնահատումը չի ենթադրում տարբեր սովորողների ուսումնական արդյունքների համեմատում, այլ՝ սովորողի սեփական արդյունքների համեմատում:

1. Ձևավորող գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում:
2. Ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրում է ուսուցիչը, այն հաստատվում է առարկայական մեթոդմիավորման կողմից և կարող է լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:
3. Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:
4. Ձևավորող գնահատում իրականացնելիս օգտագործվում են սովորողի ուսումնական ձեռքբերումները և դժվարությունները նկարագրող վերլուծություններ, մեկնաբանություններ:
5. Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

Ձևավորող գնահատումն ապահովում է.

1) ներառական, փոխներգործուն և համագործակցային ուսուցման ու ուսումնառության միջավայրի ստեղծում,

2) սովորողի զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապ,

3) սովորողի կողմից ինքնագնահատման և ինքնավերլուծության որակների ձեռքբերում:

Ձևավորող գնահատումը ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված և պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում

● Ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում:

● Սովորողների ակտիվ մասնակցություն սեփական ուսումնառության գործընթացին:

● Ուսուցման գործընթացի ճշգրտում և շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:

● Գնահատման՝ սովորողների մոտիվացիայի և ինքնագնահատականի վրա խորքային ազ-դեցության գիտակցում, որն իր հերթին կարևոր ազդեցություն ունի ուսուցման արդյունավե-տության վրա:

● Սովորողների կողմից իրենց գիտելիքները ինքնուրույն գնահատելու ունակության ձևա-վորում:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի կողմից՝ ինքնագնահատման, փոխադարձ գնահատման միջոցով:

Ուսուցչի և սովորողների կողմից գործածվող գնահատման ձևերը կարող են նույնը լինել, օրինակ՝ թեստ, քննարկում, նախագիծ և այլն:

Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1) գրավոր կարճ հարցում (թեստ)

2) բանավոր հարցում

3) գրավոր աշխատանք (թելադրություն, փոխադրություն, շարադրություն, արտագրություն և այլն)

4) գործնական աշխատանքներ

5) տնային աշխատանք

6) թղթապանակ

6) նախագծային աշխատանք

Ձևավորող գնահատման ձևերից յուրաքանչյուրի համար սահմանվում են չափանիշներ: Չափանիշները պետք է լինեն հստակ և ճշգրիտ, որպեսզի գնահատումը լինի օբյեկտիվ:

Չափանիշների հիման վրա ապահովվում է ուսուցչի և սովորողի միջև հետադարձ կապը, բացահայտվում է, թե առաջադրանքի կատարման ընթացքում սովորողը ինչ դժվարություն-ներ ունի, ինչի հիման վրա էլ որոշվում են ուսուցման և ուսումնառության կազմակերպման հարմարեցումներն ու փոփոխությունները՝ որոնք ուղղված են սովորողի ուսումնառության արդյունքները բարելավելուն:

Ձևավորող գնահատում իրականացնելիս օգտագործվում են սովորողի ուսումնական ձեռք-բերումները և դժվարությունները նկարագրող վերլուծություններ, մեկնաբանություններ:

Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի տրվում:

Ձևավորող գնահատում անընդհատ գործընթաց է, որը պետք է իրականացնել յուրաքանչյուր դասին: Ձևավորող գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում սովորողների ձեռքբերումների և դժվարությունների մասին:

Ձևավորող գնահատման օբյեկտը սովորողի գործունեությունն է, ոչ թե սովորողը և ուղղված է սովորողի ուսումնառության նպատակի իրագործմանը: Հետևաբար, գնահատման բոլոր ձևերի և տեսակների ընտրության հիմքը ուսուցման նպատակի հստակ ձևակերպումն է:

Յուրաքանչյուր դասին ուսուցչի համար կարևոր է խորհել հետևյալ հարցերի շուրջ.

● Որքանո՞վ են սովորողները հասկացել անցած նյութը:

● Ինչպե՞ս կարող եմ ստուգել:

● Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար:

● Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչը պետք է փոխել դասավանդման մեթոդներում:

Գիտենք, որ չափազանց կարևոր է սովորողների ակտիվ մասնակցությունը իրենց ուսումնական գործընթացին և ձևավորող գնահատման ճիշտ և պարբերական կիրառումը կապա-հովի ցանկալի ներգրավվածությունն ու ակտիվ մասնակցությունը: Վերջնարդյունքները ևս պետք է հասկանալի լինեն սովորողներին՝ նրանց դարձնելով գնահատման չափանիշների մշակման մասնակից: Նպատակներն ու վերջնարդյունքները կարելի է ներկայացնել, որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունենան անդրադառնալու դրանց և ստուգելու իրենց ձեռքբերումները:

Ինքնագնահատում

Ինքնագնահատումը ձևավորող գնահատման կարևոր բաղադրիչներից է, առանց որի ձևա-վորող գնահատումը չի կարող արդյունավետ լինել: Ինքնագնահատման և փոխադրած գնա-հատման կարևոր առանձնահատկությունը գնահատողի դերի ստանձնումն է: Ինքնագնա-հատման և փոխադարձ գնահատման դեպքում գնահատողը սովորողն է:

Սովորողի ուսումնական առաջընթացի համար կարևոր հիմք են նրա ճիշտ պատկերացում-ներն ուսումնական նյութի իր իմացության մակարդակի ու սեփական ուժերով թերությունները վերացնելու կարողության մասին: Այդ նպատակներին է ծառայում ինքնագնահատման կանոնավոր կիրառումը:

Որպեսզի հստակ ընկալվի, թե ինքնագնահատումը որքանով կարող է նպաստել սովորողի ուսումնառության արդյունավետությանը, անհրաժեշտ է նրան հնարավորություն ընձեռել և օգնել՝ անդրադառնալու հետևյալ անհրաժեշտ գործողություններին .

● որպես մտածող և սովորող իր գիտելիքի մակարդակը ինքնուրույն պարզելուն,

● սեփական ուսման որակը բարելավելու միջոցներ փնտրելուն և դրանք կիրառելու ռազմավարություն մշակելուն:

● առաջադրանքը հստակ պատկերացնելուն,

Ինքնագնահատման նպատակն է՝ ընդլայնել աշակերտի ճանաչողությունը, ինքնաճանաչումը, արժեքային համակարգը, ինչպես նաև ձևավորել պատասխանատվություն: Առաջա-դրան¬քի վերլուծությունից հետո կարևոր է, որ աշակերտը տեսնի և հասկանա ձեռքբերում-ներն ու դժվարությունները և դրանց շտկման համար դրսևորի համապատասխան վերաբեր-մունք, ձգտում և կամք: Օրինակ, եթե ուսուցչի հետ միասին կարդում են շարադրությունը, և սովորողը կարողանում է նկատել իր սխալներն ու թերությունները և ասել, թե ինչպես կարելի է շտկել, դա ինքնագնահատման դրսևորում է:

Որպեսզի ուսանելը լինի արդյունավետ, սովորողին պետք է հասցնել իր ձեռքբերումների առկա և վերջարդյունքների միջև եղած տարբերության նվազեցնելու գիտակցությանը: Այդպիսի որակներով օժտված սովորողն ուսուցչի ուղղորդմամբ կարող է վերացնել իրական և ցանկալի արդյունքի միջև եղած ճեղքվածքը:

Եթե սովորողը հաճախ կատարի ինքնագնահատման աշխատանքներ, ապա դա նրան կօգնի ճիշտ պատկերացում կազմել իր ձեռքբերումների և դժվարությունների մասին՝ պատասխանատու դառնալով իր ուսումնառության համար:

Ինքնագնահատումը սովորողից պահանջում է իր կատարած աշխատանքների նկատմամբ հետադարձ դատողություններ անելու կարողություն, որն արդյունավետ սովորելու համար կարևոր առանձնահատկություն է:

Սովորողի ինքնագնահատման գործում կարևոր դեր է վերապահված ուսուցչին: Նա պետք է օգնի սովորողին հասկանալ, թե ինչին և ինչպես պետք է փորձի հասնել:

Նպատակը սովորողին հասկանալի դարձնելուց հետո, ուսուցչի հաջորդ խնդիրը սովորողի անելիքները պարզաբանելն է,որը նրան կհասցնի հաջողության: Ինքնագնահատման հմտությունների ձևավորումը սովորողին հնարավորություն է տալիս արժեքավոր դատողություններ անել իր և այլոց ձեռքբերումների վերաբերյալ, համեմատել իր ներկա և պահանջվող մակարդակները, հեշտությամբ վերացնել սեփական թերությունները:

Ինքնագնահատում իրականացնելու համար կարելի կիրառել ձևավորող գնահատման տար-բեր գործիքներ, ինչպիսիք են, օրինակ՝ հարցաթերթերը, գնահատման անիվը, ստուգաթեր-թերը, ելքի քարտերը և այլն: Ձևավորող գնահատման ցանկացած գործիք կարելի է կիրառել ինքնագնահատման և փոխադարձ գնահատման նպատակով:Կարևոր է, որ ցանկացած գործիք կիրառելիս պահպանվեն և կիրառվեն գնահատման նույն չափանիշները, այսինքն՝ եթե նույն գործիքով գնահատում է և ուսուցիչը և սովորողները, ապա գնահատումը պետք է իրականացվի նույն չափանիշներով, որոնք նախապես հայտնի են գնահատողներին և գնահատվողներին:

ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ

Հանրակրթության պետական նոր չափորոշիչն ունի կարողունակահեն (կոմպետենտահեն) կառուցվածք, և 8 հիմնական կարողունակություններից է սովորել սովորելու կարողունակությունը. «Սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում:Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն:Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու,վերլուծելու,ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ:Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն»: Այս կարողունակությունը արտացոլված է տարբեր ուսումնական առարկաների վերջնարդյունքներում:

Ներկայացնենք ինքնագնահատման օրինակ մայրենիի որևէ թեմայի շրջանակում՝

«Գնահատման անիվ» գործիքն ուղղելով առարկայական վերջարդյունքների ապահովմանը:

Ինչպե՞ս ես գնահատում թեմայի ուսումնասիրումը: Գնահատի՛ր՝ յուրաքանչյուր գույնի մեջ գրելով «Շատ լավ,» «Լավ», «Ոչ այնքան լավ», «Վատ» ***բառերից մեկը:***



Փոխադարձ գնահատում

Փոխադարձ գնահատման միջոցով սովորողները տեղեկանում են իրենց աշխատանքի ուժեղ և թույլ կողմերի, սխալների մասին, անհրաժեշտության դեպքում ստանում են լրացուցիչ առաջադրանքներ և հանձնարարություններ՝ բացթողումները լրացնելու համար:

Փոխադարձ գնահատում իրականացնում են

1. սովորողը՝ սովորողին,
2. խումբը՝ խմբին,
3. սովորողը՝ խմբին,
4. խումբը՝ սովորողին:

Կարևոր է, որ ուսուցչի կամ դասընկերոջ կողմից ապահովվի սովորողի առաջընթացը խթանող հետադարձ կապ. դա կօգնի սովորողին գնահատել իր ուսումնառության ընթացքը: Էական է, որ փոխստուգում իրականացնող սովորողն իր դասընկերոջ աշխատանքը գնա-հատելիս լինի օբյեկտիվ:

Այս գործընթացը զարգացնում է սովորողի մտածողությունը և տրամաբանությունը. ամեն անգամ սովորողը ընկերոջ սխալները նկատելիս՝ անում է համապատասխան պարզաբա-նումներ, բերում հիմնավորված և փաստարկված օրինակներ: Դրանով

բարձրանում է նրա ուսումնառության արդյունավետությունը և արժևորվում նրա ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները:

Փոխադարձ գնահատումը նպաստում է, թե գնահատողի, թե գնահատվողի սեփական իմա-ցության վերարժևորմանը: Դա առաջընթացը խթանող հանգամանք է, քանի որ սովորող-ներից պահանջվում է՝

• անձնական մեծ պատասխանատվություն,

• անդրադարձ սեփական ուսումնառությանը,

• ինքնարժևորում ու գնահատման հիմնավորում:

Փոխադարձ գնահատման և ինքնագանահատման աշխատանքների շնորհիվ ուսումնական գործընթացում պահովվում է յուրաքանչյուր սովորողի գործուն ընդգրկվածությունը:

Գլուխ 4

Իմ փորձառությունը

Ստորև ներկայացնում եմ իմ կազմած աշխատանքները,որոնց միջոցով իրականացրել եմ միավորային և ձևավորող գնահատում:

Թեմատիկ գրավոր աշխատանք

Առարկա՝ Գրականություն

Դասարան՝ 9

Աշակերտ՝ _____

Ուսումնական տարի՝ _____

Կիսամյակ՝ _____

1. Ինչպե՞ս է ստեղծվել դյուցազնավեպը:/1/
2. Ո՞վ է առաջին անգամ գրի առել էպոսը:/1/
3. Քանի՞ ճյուղից է բաղկացած էպոսը:/1/
4. Ի՞նչ գաղափար է հաստատում դյուցազներգությունը:/1/
5. Ինչո՞ւ է բանասացը էպոսի գլխավոր հերոսներից յուրաքանչյուրին կոչում Սասնա ծուռ:/1/
6. Ինչպե՞ս է դյուցազներգության մեջ դրսևորվում ջրի պաշտամունքը:/1/
7. Ո՞վ է դյուցազներգության ամենասիրելի հերոսը:/1/
8. Ովքե՞ր են էպոսի հերոսները:/1/
9. Ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան Դավթի և Մելիքի միջև:/1/
10. Ինչպե՞ս է վերնագրված դյուցազնավեպի համահավաք բնագիրը, ե՞րբ է այն կազմվել:/1/

11. Ո՞վ է «Սասնա ծռեր» էպոսի տարբերակներից մեկը գրի առել և հրատարակել «Դավիթ ու Միհր» վերնագրով:/1/
12. «Սասնա ծռեր» էպոսում ինչպե՞ս է ավարտվում Դավթի և Մըսրա Մելիքի մենամարտը: /1/
13. Ո՞վ է Դեղձուն-Ծամը:/1/
14. Ովքե՞ր են էպոսի հերոսների կանայք:/1/
15. Ներկայացնել Դավիթի և Փոքր Միհրի հանդիպումը:/1/
16. Ո՞ր դարերի պայքարն է նկարագրվում էպոսում և ու՞մ դեմ:/1/
17. Ի՞նչ անուն է տալիս ժողովուրդը իր սիրելի հերոսներին:/1/
18. Ովքեր են առաջին անգամ գրի առել «Սասունցի Դավիթ» էպոսը: /1/

Ամփոփիչ միավորներ	Գնահատական
18	10
16-17	9
14-15	8
13-12	7
10-11	6
8-9	5
7	4
5-6	3
3-4	2
1-2	0

Գնահատման սանդղակ՝ միավորային

Դասարան՝ 9-րդ

Առարկա՝ Գրականություն

Առարկա՝ Հայոց լեզու

Դասարան----------

Ուսումնական տարի/ ամիս,ամսաթիվ----------

Աշակերտ----------

Միավոր՝ 30

1 Շարունակի՛ տրված պարզ նախադասությունները՝ դարձնելով բարդ, ընդգծի՛ր ավելացած նախադասության ստորոգյալները:

ա)Մեծ գրողները մարգարեներ են, _____:

բ)Դավիթը սնվում էր Սասունից բերված մեղր ու կարագով, _____

_____:

գ)Մելիքը մի նամակ գրեց Դավթին _____:

դ)Առյուծ Միերը Աստծո կամքով ունենում է մի ժառանգ,
_____

_____:

2 Տրված շարունակության համար գրի՛ր մտքին համահունչ նախադասություն, ընդգծի՛ր ստորոգյալները:

ա)_____, որ իրեն սպասվում են նոր փորձություններ:

բ)_____, իսկ Սասնա աստղը սկսվում է խավարել:

գ)_____, որ այլևս զենք չվերցնեն:

դ)_____, որոնք համալրում են հայրենասերների բանակը:

3. Համապատասխան տեղերում տեղադրի՛ր փակագծերում դրված շաղկապները/ (և, որ, բայց, եթե, որ):

_____ նրան փողոցում տեսնեիր, կմտածեիր, _____ սովորական մարդ էր՝ հասարակ ու աննշան: _____ դրանով հանդերձ՝ նա մեծ մարդ էր: Նա իմ հայրն էր, _____ ես գիտեմ,_____ նա մեծ մարդ էր:

4 Կետադրի՛ր նախադասությունները և վերականգնի՛ր զեղչված ստորոգյալները:

ա) Վարդենու թփերի վրա կանգնել էին հինգ սոխակ մեկը մեջտեղը և չորսը շուրջը:

բ)Սարերն ու քարերը քամուց են կործանվում մարդկային բարեկամությունը խոսքից:

գ/Պատերազմը փորձում է քաջին զայրույթը իմաստունին կարիքը բարեկամին:

դ/ Ճշմարտությունը շատ երես ունի ունի՝ այդ պատճառով ականջիդ մեկը բարեկամիդ տուր մյուսը թշնամուդ:

5 Տրված գերադաս նախադասությունները շարունակի՛ր՝ ավելացնելով ստորադաս նախադասություններ:

ա/ Ես չեմ ծուլանում,_____:

բ/Նա կարևորում էր ընկերոջ խոսքերը, _____

_____:

գ/Մենք կրկին այցելեցինք նրան, _____

_____:

դ/ Հայրս ոչ մի ակնարկով չհիշեցրեց ինձ կատարվածը, _____

_____:

6 Տրված ստորադաս նախադասություններին ավելացնելով գերադաս նախադասություններ՝ ստացի՛ր ավարտուն մտքեր:

ա/_____, որ նրա առաողջական վիճակը հետզհետե լավանում էր:

բ/_____, թեպետ այդ մասին ոչ ոք չգիտեր:

գ/_____, եթե խոստացած չլինեի:

դ/_____, որովհետև խոստացել էի ծնողներիս:

7 Տրված շաղկապներով կազմի՛ր բարդ ստորադասական նախադասություններ:

Որ, որպեսզի, եթե, թե, թեկուզ

1_____

2_____

3_____

4_____

5_____

8 Վերլուծի՛ր շարահյուսորեն:

1 Բայց ահա մի օր գալիս է օղի արտադրող ֆիրմայի ներկայացուցիչը:

2 Ծիծեռնակի վարքագիծը նրան բացատրել էր գրքեր չգրած, բայց թռչունների, անտառի ու դաշտի կյանքը լավ իմացող ծեր անտառապահը:

3. Գարնանը բարդու սերմերը ձյան փաթիլների պես օդում ճոճվում են, հողի մեջ ընկնում:

Գնահատման ստուգաթերթ

Դասարան՝ 9-րդ

Առարկա՝ Հայոց լեզու

	Վերջնարդյունքներ գնահատման համար	Շատ լավ	Լավ	Ոչ այնքան լավ	
1.	Տրված նախադասությունները դարձնում է բարդ՝ ընդգծելով ավելացած ստորոգյալները:				
2.	Գտնում է մտքին համահունչ նախադասություն և գրում՝ ընդգծելով ստորոգյալները:				
3.	Ճիշտ տեղադրում է փակագծերում դրված շաղկապները:				
4.	Կետադրում է նախադասությունները՝				

	վերականգնելով զեղչված ստորոգյալները:				
5	Շարունակում է նախադասությունները՝ ավելացնելով ստորադաս նախադասությունները:				
6	Տրված ստորադաս նախադասություններին ավելացնում է գերադաս նախադասություններ՝ ստանալով ավարտուն մտքեր:				
7	Կազմում է բարդ ստորադասական նախադասություններ՝ գործածելով տրված շաղկապները:				
8	Տրված նախադասությունները վերլուծում է շարահյուսորեն:				

12-րդ դասարան

Առարկան՝«Հայ գրականություն»

Թեմատիկ աշխատանք 1

Մարդ, բնություն, տեխնոլոգիա

.....——.....դպրոցի

----———————— դասարանի աշակերտ (-ուհի)

---

1 Ընտրի՛ր ճիշտ տարբերակը:

Հ Սահյանի ո՞ր բանաստեղծությունը հայրենասիրական թեմայով չէ
ա) «Մասրենի»

բ) «Ես այն եմ եղել»,

գ) «Ախր ես ինչպե՜ս»

2 Ընտրի՛ր ճիշտ տարբերակը:

Տրված բանաստեղծական տողերի հեղինակն է

Ես իմ թաղիս քերթողն եմ

Լեզուս աղքատ է թաղեցիներուս նման,

Տաղերուս միակ հարստությունը կը կազմեն
Թաղեցիներուս հոգերը

ա)Համո Սահյանը

բ) Զահրատը

գ)Վահագն Դավթյանը

3 Ընտրի՛ր ճիշտ տարբերակը:

Զահրատը ստեղծագործել է
ա)գրաբար

բ) արևելահայերեն գ)
արևմտահայերեն
դ)միջին հայերեն

4 Ընտրի՛ր, թե Աղասի Այվազյանի «Եռանկյունին» վիպակում ով է ներկայացնումպատմությունը:

ա) հեղինակը

բ) Մկրտիչներից մեկը

գ) դպրոցական Հովհաննեսը

5 Գրի՛ր Համո Սահյանի իսկական անուն-ազգանունը:

_____

6 Ընդգծի՛ր Վահագն Դավթյանի մեկ բանաստեղծության վերնագիրը

«Թաղը», «Հայրենիք», «Պապը», «Տողի մասին», «Օրը մթնեց», «Մեր տան պատից»:

7 Գրի՛ր, թե Համո Սահյանի որ բանաստեղծության տողերն են:

Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,
Ախր ուրիշ տեղ հորովել չկա,

Ախր ուրիշ տեղ սեփական մոխրում
Սեփական հոգին խորովել չկա

_____

8 Շարքում ընդգծի՛ր Համո Սահյանի 3 բանաստեղծությունների վերնագրերը

«Հայաստան ասելիս», «Սերենատի պես», «Ծովն էր, գիշերն էր, ես էի և դու»,

«Արկածախնդրություն», «Կիկո մեռավ», «Զերո», «Երկնավառ», «Ես այն եմ եղել, ինչ որ եղել եմ», «Երկնասացություն», «Մարկոս և Մարկոս»:

9 Լրացրու՛ անհրաժեշտ բառերը:

Վիպակը գրականության պատմողական ժանրերից մեկն է, որը միջին տեղ է գրավում _____ և _____ միջև: Գործող անձանց թվով, կյանքի ընդգրկման

ծավալով վիպակն ավելի մեծ է ——————— և նորավեպից, բայց փոքր՝——————— ———— :

10 Լրացրու՛ միտքը:

Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակը սկզբում լույս է տեսել _____վերնագրով:

11 Նշի՛ր, թե ում խոսքերն են, այնուհետև գրի՛ր վիպակի վերնագիրը և հեղինակին:

«Կռիվ չկա, կամք չկա, լավ ապրելու ցանկություն չկա, կարտոլ է՝ կարտոլ էլ կեր»:

---

12 Գրի՛ր, թե Լևոն Խեչոյանի որ պատմվածքից են հետևյալ տողերը:

«Նա լացը չէր կարողանում զսպել, մենք սպասում էինք, Վաչիկը սապոգը հանեց, մեջը ոտքը հարող մեխ կամ քարի կտոր էր որոնում, մենք սկսեցինք փոխնիփոխ միծխախոտ ծխել ու երքաշած ծուխը երկար պահել թոքերի մեջ: Հրամանատարը մի անգամ էլ հարցրեց, նա լացելով աղաղակեց «Ես այլևս չեմ կարող»: Ապտակեց ձեռքերը կապած, իր կողքին ծնկաչոք, սագի նման բարակ, երկար վզով մահմեդականին, ասաց «Ես այլևս չեմ կարող, մի նրա խալը տեսեք, նա հորս շատ է նման»: Մեր բոլորի շրթունքները ճաքճքված էին, ու մենք ո՛չ կարողանում էինք ծիծաղել, ո՛չ էլ լացել»:

---

13 Շարքում ընդգծի՛ր Աղասի Այվազյանի «Եռանկյունին» վիպակի հերոսներիցերկուսի անունները

Սիմոն, Մկրտիչ, Լյուբա, Արմենակ, Աղուն, Շողեր, Աբել:

14 Բնութագրի՛ր «Աշնան արև» վիպակի գլխավոր հերոսուհի Աղունին մի քանի նախադասությամբ:

_____

_____

_____

_____

_____

15 Մեկնաբանի՛ր Աղասի Այվազյանի «Եռանկյունին» վիպակի վերնագիրը:

_____

_____

_____

_____

_____

16 Մի քանի նախադասությամբ գրի՛ր, թե մարդու և բնության փոխհարաբերությունների ներդաշնակությունը որքանով է կարևոր անհատի կյանքում: Կարծիքդ հիմնավորի՛ր մի քանի օրինակով:

_____

_____

_____

_____

_____

Գնահատման սանդղակ՝ Ինքնագնահատում՝ + կամ -

Դասարան՝ 12-րդ

Առարկա՝ Գրականություն

1 Ընտրեցի ճիշտ տարբերակը:	
2 Կարդացի հարցը և գտա ճիշտ տարբերակը:	
3 Գտա ճիշտ պատասխանը	
4 Ընտրեցի ճիշտ տարբերակը	
5 Գտա ճիշտ պատասխանը:	
6 Հասկացա հարցը և ընդգծեցի ճիշտ պատասխանը:	
7 Գտա բանաստեղծության համապատասխան տարբերակը:	
8 Հասկացա հարցը և շարքում ընդգծեցի պատասխանը:	
9 Պատասխանեցի հարցին՝ ամբողջացնելով նախադասությունը:	
10 Հասկացա հարցը և շարունակեցի միտքը:	
11 Պարզ ու հասկանալի շարադրեցի միտքս:	
12 Կարդացի հարցը և գտա պատմվածքի հեղինակին:	
13 Կարդացի հարցը և տեքստում ընդգծեցի պատասխանը:	
14 Բնութագրեցի հերոսուհուն:	
15 Մեկնաբանեցի վիպակի վերնագիրը:	
16 Պարզ ու հասկանալի շարադրեցի միտքս զգացածիս վերաբերյալ:	

Եզրակացություն

Ուսումնասիրելով հանրակրթության պետական չափորոշիչը, գնահատման տեսակները, դրանց մեթոդաբանությունը, կիրառելով գնահատման որոշ գործիքներ հայոց լեզվի և գրականության դասաժամերին՝ գալիս ենք հետևյալ եզրահանգումներին.

- Գնահատման գործիքները օգնում են սովորողին բարելավելու սեփական գիտելիքներն ու ընկալումները, խթանելու ինքնավստահությունն ու սովորելու խանդավառությունը, ինչպես նաև ինքնաանդրադարձ, վերլուծություններ կատարելու, զարգացնելու ինքնագնահատման հմտությունները և բացահայտելու հաջողության հասնելու երաշխիքները:
- Միավորային գնահատումը ունի վերահսկող դեր: Դրա նպատակն է թվանշանների միջոցով գնահատել ուսումնական գործընթացում աշակերտի ձեռքբերումները, որոնք սահմանված են չափորոշիչներով և ծրագրերով:
- Հանրակրթության դերը պայմանավորված է նաև նրա գործնական–կիրառական նշանակությամբ:Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից մեկն է՝ աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս:
- Կրթական հանրության մեջ աստիճանաբար ձևավորվում է այն համոզմունքը, որ ուսումնական գործունեության և արդյունքների գնահատումը սոսկ առկա գիտելիքների ստուգման ու վավերացման գործառույթ չունի: Մեր կարծիքով այն հնարավորություն ունի սովորողների մեջ ձևավորելու ուսումնական կայուն մոտիվացիա, կարող է ուսուցման գործընթացը դարձնել վերահսկելի, սատարել ճիշտ մասնագիտական կողմնորոշմանը, ձևավորել ժամանակակից մարդուն անհրաժեշտ մի շարք որակներ:
- Գնահատման նոր համակարգը պիտի օգնի սովորողին բացահայտելու իր ուսումնական ներունակ հնարավորությունները, սատարի նրա ինքնուրույնության կայացմանը, զարգացմանն ու ինքնահիրացմանը:
- Դպրոցում աշակերտակենտրոն կրթություն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ սովորողը դիտվի և իրականում լինի ուսուցման լիարժեք սուբյեկտ, մասնավորապես նաև՝ գնահատման գործընթացի սուբյեկտ:
- Աշակերտն իր ուսումնառության պրոցեսը կկարողանա լավագույնս կազմակերպել, եթե հստակ պատկերացում ունենա թե իրենից ինչ են պահանջում և ինչպես են գնահատում իր ձեռքբերումները: Եթե դպրոցը սովորողին ներքաշում է գնահատման գործընթաց, դարձնում է նրան այդ գործընթացի ակտիվ մասնակից, ապա վերջինս կկարողանա իսկապես օգտվել գնահատման արդյունքներից և գնահատումը ծառայեցնել իր ուսումնական նպատակներին:

Գրականության ցանկ

1https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_38.html

2Հանրակրթության պետական նոր չափորոշիչ,2021թ

3. Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն.Ընդհանուր դրույթներ, հիմնական մոտեցումներ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005:

4. Սովորողների գնահատման հայեցակարգ, ՀՀ ԿԳՆ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005:

5.Ադամյան Ն«Դասավանդման մեթոդիկայի արդի տեխնոլոգիաներ»Գյումրի2018